ԼՂԻՄ-Ի ՀԱՏՈՒԿ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵՈՒՄ

Լեռնային Ղարաբաղում, տընտեսավարման նոր պայմաններում, գլխավորը այսօր պլանային առաջադրանքների կատարման ապահովումն է: Եկել է ժամանակը, որ մարդիկ գիտակցեն այն առաջադրանքների իրագործման անհրաժեշտությունը, որ դրված են մարզի աշխատավորության առաջ: Մինչդեռ որոշ արտադրական միավորումներում, ձեռնարկություններում ու տնտեսություններում աշխատում են լճացման ժամանակաշրջանի տեմպերով: Հատուկ մտահոգության առարկա է շինարարության պրոբլեմը: Եվ պատահական չէ, որ ԼՂԻՄ-ի Հատուկ կառավարման կոմիտեի նիստում քննարկման դրվեց մարզի № 9 շինտրեստի, նրա ստորաբաժանումների կողմից պլանային առաջադրանքների կատարման ապահովման հարցը:

Նշվեց, որ ընթացիկ հնգամյակում մարզում կառուցվել են ընդամենը 55 հազար քառակուսի մետր տարածքով բնակելի տներ, 1696 տեղով դպրոցական և նախադպրոցական հիմնարկներ և մի շարք այլ օբյեկտներ, մի բան, որ ոչ մի կերպ հնարավոր չէ նորմալ երևույթ համարել: Այդ ժամանակահատվածում տրեստի ստորաբաժանումների կողմից տապալվել է 22,6 հազար քառակուսի մետր տարածքով բնակելի տների, արդյունաբերական 2, սոցիալական, կուլտուրկենցաղային 18 օբյեկտների գործարկումը: Չի կատարվել մոտ 19 միլիոն ռուբլու մոնտաժային աշխատանք: Եվ դա՝ շինարարական նվազագույն պլանների դեպքում: Առ այսօր տրեստի և նրա ստորաբաժանումների ղեկավարությունը, կուսակցական կազմակերպությունները՝ իրենց աշխատանքում նկատելի բեկում չեն մտցրել, աշխատում են ղեկավարման հին մեթոդներով: Չի բարելավվում ստորաբաժանումների ֆինանսական վիճակը, առաջընթաց չի նկատվում տնտեսավարման նոր պայմաններին փոխադրվելու ուղղությամբ: Անցած տարում նկատելիորեն իջեցվել են աճի տեմպերը, նվազել է արտադրանքի ծավալը, վնասը հասցվել է 328 հազար ռուբլու, իսկ վարկային պարտքը այդ ժամանակամիջոցում աճել, հասել է 3,374 հազար ռուբլու, շրջանառու միջոցների պակասը՝ 1.405 հազար ռուբլու:

Թվում էր, ընթացիկ տարում տրեստի ղեկավարությունը կըփոխեր ղեկավարման ոճը, սակայն նրա աշխատանքում էական առաջխաղացում չնկատվեց: Հունվար և փետրվար ամիսներին կատարվել է ընդամենը 1002 հազար ռուբլու ծավալի շինմոնտաժային աշխատանք, որ կազմում է պլանի հազիվ 52,2 տոկոսը:

Կոմիտեն միաժամանակ նշեց, որ շինարարական օբյեկտները դանդաղ են համալրվում բարձր արտադրողականություն ունեցող տեխնիկայով, չեն բավարարվում մասնագիտացված ավտոտրանսպորտով, շինարարական սարքավորումներով, փոքր մեքենայացման միջոցներով: Շինհարթակներում վատ են կազմակերպվում աշխատանքային պրոցեսները, չեն կատարելագործվում աշխատանքների մեքենայացման եղանակները, շինարարական աշխատանքների շատ պրոցեսներ կատարվում են պարզունակ եղանակով, ձեռքի ծանր աշխատանքով: Դա նկատելի է հատկապես բեռնման-բեռնաթափման ապարեզում: Անհանդուրժելի է, երբ ձգձգվում, խախտվում են օբյեկտների շինարարության նորմատիվային ժամկետները, հաճախ դրանք շահագործման են հանձնվում կիսատ-պռատ, ցածր որակով: Այս և նման թերությունները հիմնականում բացատրվում են նրանով, որ ինչպես տրեստում, այնպես էլ նրա ստորաբաժանումներում չեն տիրապետում գիտատեխնիկական առաջադեմ մեթոդներին, դրանք չեն արմատավորում ամենօրյա աշխատանքում: Շինկառույցների ղեկավարները դեռևս չեն կարողացել բարձրացնել շինարարների աշխատանքային մարտունակությունը, չի ապահովվում կոմունիստների ավանգարդային դերը: Նկատելիորեն վատ է աշխատանքը կապիտալ շինարարության արդյունավետության բարձրացման գործում:

Կոմիտեն միանգամայն անբավարար համարեց մարզգործկոմի նախագահի տեղակալ Ֆ. Հուսեյնովի աշխատանքը, որի պարտականությունների մեջ էր մտնում կապիտալ շինարարության ղեկավարման գործը: Կոմիտեն Ֆ. Հուսեյնովին ազատեց շինարարության տեղամասի ղեկավարման պարտականություններից:

Լուրջ թերություններ կան նաև ԼՂԻՄ-ի Հատուկ կառավարման կոմիտեի կապիտալ շինարարության բաժնի պետ Բ. Սիմոնյանի աշխատանքում, որի համար նրան հայտարարվեց խիստ նկատողություն: Խիստ նկատողություն հայտարարվեց նաև № 9 շինտրեստի կառավարիչ Ռ. Իսրայելյանին:

Նշվեց նաև կուսակցության Ստեփանակերտի քաղկոմի և քաղգործկոմի անբավարար աշխատանքը կապիտալ շինարարության ղեկավարման գործում:

ԼՂԻՄ-ի Հատուկ կառավարման կոմիտեն կոնկրետ խնդիրներ դրեց տրեստի ղեկավարության և նրա ստորաբաժանումների, ինչպես նաև կուսակցական կազմակերպությունների առջև՝ կարճ ժամանակամիջոցում մշակել և իրականացնել տրեստի ֆինանսական վիճակի բարելավման, տնտեսավարման նոր պայմանների պարտադիր անցման համար կոմպլեքս միջոցառումներ: Տեղյակ պահվեց, որ ՍՍՀՄ պետշինը ԼՂԻՄ է գործուղում որակյալ մասնագետներ՝ տեղում տնտեսական հաշվարկի և աշխատանքի կազմակերպման ու խթանման այլ առաջադիմական մեթոդների արմատավորման գործում պրակտիկ օգնություն ցույց տալու համար:

Լեռնային Ղարաբաղի մեծածախ առևտրի միավորմանը պարտավորեցվեց տրեստը անխափան ապահովել նյութատեխնիկական շինանյութերով և այդ մասին սիստեմատիկ զեկուցել կոմիտեին: Անհրաժեշտ համարվեց Լեռնային Ղարաբաղում նստեղծել տընտեսահաշվարկային նախագծային-շինարարական միավորում:

Հանձնարարականներ տրվեցին մարզային Պլանային հանձնաժողովին և կապիտալ շինարարության բաժնին, Ստեփանակերտի քաղկոմին, բոլոր շրջկոմներին, ժողովրդական դեպուտատների շրջանային (քաղաքային) սովետների գործկոմներին:

Լ. ՄԿՐՏՉՅԱՆ
(Մեր սեփ. թղթ.)
Ստեփանակերտ